

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2014թ.

N 382-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 782-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2010-2014 թվականների հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 782-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

«ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ» բաժնի՝ 2014 թվականին իրականացվող միջոցառումները նախատեսող մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ծրագրի իրականացման հինգերորդ (2014) նախատեսվում է՝

1. «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից արտադրված 75տոննա առաջին վերարտադրության սերմացուն տրամադրել ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել մոտ 300 հեկտար տարածության վրա: Սերմացուի հատկացումը կկատարվի նախարարության համակարգի «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ հիմք ընդունելով հողի սեփականության կամ վարձակալության վկայականները: Սերմացուի տրամադրումից հետո կկատարվի փաստացի ցանքերի ստուգում:

2. 2014 թվականին «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից նախատեսվում է արտադրել 6 տոննա սուպերէլիտային և 30 տոննա էլիտային սերմացու, որը կօգտագործվի ծրագրի շրջանակներում առաջին վերարտադրության սերմացուի արտադրության համար, կարտադրվի նաև 360 տոննա երկրորդ վերարտադրության սերմացու, որը մատչելի գներով կտրամադրվի

ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավորող սուբյեկտներին, որով հնարավոր կլինի ցանքեր իրականացնել մոտ 1500 հեկտար տարածության վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**